

ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
2015-231

Լյուքսեմբուրգ/Երևան, 16 հոկտեմբերի 2015թ

## ԵՆԲ-ն աջակցում է կոշտ թափոնների կառավարմանը Հայաստանում

Եվրոպական ներդրումային բանկը (ԵՆԲ) տրամադրում է 8 մլն եվրո վարկ Երևանում և հարակից չորս մարզերում կենցաղային կոշտ թափոնների հեռացման համակարգի բարելավման ծրագրի առաջին փուլի ֆինանսավորման նպատակով:

Ծրագրով նախատեսվում է կառուցել նոր սանիտարական աղբավայր, դադարեցնել գործող աղբավայրի շահագործումն, ու իրականացնել 1.9 մլն բնակիչների կոշտ կենցաղային թափոնների մշակման միջոցառումներ ՀՀ մայրաքաղաքում և հարակից չորս մարզերում:

*«ԵՆԲ-ն առաջին վարկն է տրամադրում Արևելյան գործընկերության տարածաշրջանում կոշտ թափոնների կառավարման աջակցության նպատակով: Այն միտված է գրեթե երկու մլն. մարկանց կյանքի որակի և առողջական պայմանների համար առանցքային նշանակություն ունեցող սոցիալական ենթակառուցվածքի բարելավմանը: Ծրագիրը հանդիսանում է ԵՆԲ-ի և տարածաշրջանային դերակատարների, Եվրոպական հանձնաժողովի և գործընկեր միջազգային ֆինանսական գործակալությունների միջև գոյություն ունեցող գերազանց համագործակցության վառ վկայությունը»,* ասաց ֆինանսական գործառնությունների Հայաստանի պատասխանատու, ԵՆԲ փոխնախագահ Լասլո Բարանյան:

Ծրագիրը համա-ֆինանսավորվում է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) կողմից հատկացվող՝ 8 մլն. եվրո վարկի և տեխնիկական աջակցության նպատակով տրամադրվող 1.9 մլն եվրո դրամաշնորհի, ինչպես նաև ԵՄ Հարևանության ներդրումային գործիքով տրամադրվող 8 մլն. եվրո դրամաշնորհի միջոցներով: Եվրոպական ներդրումային բանկի կողմից ծրագրին հատկացվող ընդհանուր ֆինանսավորումը կկազմի 17 մլն. եվրո, որից 8 մլն. եվրո վարկն այսօր ստորագրվեց ծրագրի առաջին փուլի ֆինանսավորման համար:

*«Եվրոպական միությունը հանձնառու է Հայաստանում և տարածաշրջանում կոշտ կենցաղային թափոնների կառավարմանն ուղղված նախաձեռնությունների աջակցությանը: Արդեն երրորդ դրամաշնորհն ենք տրամադրում ՀՀ կառավարությանն այս ոլորտում: Ուրախ եմ, որ հետևելով Կոտայքի և Վանաձորի մարզային նախաձեռնությունների օրինակին արդեն ֆինանսավորում ենք տրամադրում Երևան քաղաքի բնակիչների կենսամակարդակի բարձրացման ապահովմանն ուղղությամբ»,* ասաց Եվրոպական միության պատվիրակության ղեկավար, դեսպան Ն.Գ պարոն Պյոտր Սվիտալսկին:

Մինչ այժմ ԵՆԲ-ն Հայաստանի հետ ստորագրել է տսնմեկ վարկային պայմանագիր՝ 220 մլն. եվրո ընդունուր բյուջեով: Վարկային պորտֆելն ընդգրկում է տարբեր ոլորտներ՝ տրանսպորտից մինչև էներգետիկայի, ջրային ոլորտի և կոշտ թափոնների ենթակառուցվածքներ և աջակցություն ՓՄՁ-ներին:

### Ընդհանուր տեղեկություններ

Եվրոպական ներդրումային բանկը ֆինանսավորում է ծրագրեր Հայաստանում՝ ԵՄ խորհրդի և Եվրոպական խորհրդարանի կողմից Արևելյան հարևանության երկրների համար տրամադրված մանդատի հիման վրա: 2014-2020 թվականների մանդատի շնորհիվ ԵՆԲ-ն կարող է տրամադրել մինչև 4.8 մլրդ եվրո ֆինանսավորում ԵՄ երաշխիքի ներքո՝ աջակցելով ԵՄ-ն և արևելյան հարևանության տարածաշրջանում տեղական մասնավոր հատվածի

զարգացման, սոցիալական, և տնտեսական ենթակառուցվածքի և կլիմայի փոփոխության ոլորտի առանձին հետաքրքրության ծրագրերի իրականացմանը: Բանկը ստեղծել հատկացրել է նաև 3 մլրդ եվրո սեփական ռիսկ Հարևանության ֆինանսական գործիք իր աջակցությունը Հարևանության երկրներին ընդլայնելու նպատակով:

### **Մամուլի հետ կապի համար՝**

Դյուշան Օնդրեյկա [d.ondrejicka@eib.org](mailto:d.ondrejicka@eib.org),

Հեռախոս՝ +352 4379 83334 / Բջջային՝ +352 621 459 234

Կայք՝ [www.eib.org/press](http://www.eib.org/press)

Մամուլի գրասենյակի հեռախոս՝ +352 4379 21000

Էլ-փոստ՝ [press@eib.org](mailto:press@eib.org)

Հետևեք մեզ նաև Twitter [@EIBtheEUBank](https://twitter.com/EIBtheEUBank)